Կենսաթոշակային համակարգի բարեփոխումներ

18.04.2011 12:34

Հարգելի փաստաբաններ,

Սույն թվականի ապրիլի 13-ին Փաստաբանների պալատի ակումը կազմակերպել էր սեմինար քննարկում նվիրված Հայաստանի նոր կենսաթոշակային համակարգին: Ցեկույցով հանդես եկան Փաստաբանների պալատի անդամներ, ԱՄՆ ՄՁԳ կենսաթոշակային և աշխատաշուկայի բարեփոխումների ծրագրի իրավախորհրդատուներ Արսեն Մանուկյանը և Ստելլա Միքայելյանը: Ներկայացվեց կենսաթոշակային նոր համակարգի վերաբերյալ քննարկումների և ուսումնասիրությունների անցած ճանապարհը, նոր բազմաստիճան կենսաթոշակային համակարգի բաղադրիչները և դրա ընձեռած հնարավորություններն ու առավելությունները:

Համաձայն 2010թ. դեկտեմբերի 22-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունված “Կուտակային կենսաթոշակների մասին” ՀՀ օրենքի կամավոր կուտակային կենսաթոշակային բաղադրիչն ուժի մեջ է մտել 2011թ. հունվարի 1-ից, իսկ պարտադիր կուտակային բաղադրիչը կգործի 2014թ. հունվարի 1-ից:

Սեմինարի ընթացքում քննարկման ամփոփագիրը տեղադրված է www.advocates.am կայքի գրադարանի այլ նյութեր բաժնում:

Եթե Ձեզ հետաքրքրում է այս թեման, անհրաժեշտության դեպքում Փաստաբանների պալատի ակումը կարող է կազմակերպել ևս մեկ հանդիպում:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })